ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«21» հունիսի 2016թ. N 106-Ա

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով

կարգադրում եմ՝

1. «Դդմաշենի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի փոփոխության պատճառով ապրանքանյութական արժեքների հանձնում-ընդունումը սահմանված կարգով կազմակերպելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

Պողոսյան Ա. - Մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ, հանձնաժողովի նախագահ

Սարգսյան Ն. - Մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի տեղակալ

Հովհաննիսյան Բ. - Մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ

Էլիզբարյան Գ. - հանձնող

Գևորգյան Կ. - ընդունող

2. Հանձնաժողովին՝ ապրանքանյութական արժեքների հանձնման-ընդունման աշխատանքներին ընդգրկել նաև «Դդմաշենի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության նյութական պատասխանատու անձանց և համապատասխան ակտերը մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան:

3. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել ՀՀ Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Արտաշես Նիկոյանին:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ